

ՈՒՄԱՄԸ ԵՎ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՓՈԽԱԴԱՐՁ ԿԱՊԵՐԻ ՄԱՍԻՆ

ԿԱՐԻՆԵ ՏՈՒՐՅԱՆ

Երկար ժամանակ մարդկությանը հետաքրքրել է մի հարց. ինչն է ավելի շատ ազդում մարդու վրա՝ ժառանգականությունը, թե՞ միջավայրը: Մեկայն այժմ գիտնականների համար առավել հետաքրքրական է այն, թե ինչպես են անհատականության կայացման գործում փոխազդում գեններն ու մշակույթը:

Հայտնի է, որ գենետիկ կոդը հանդես է գալիս որպես զարգացման սկզբնական: Այդ կոդի շնորհիվ է, որ մենք ժառանգում ենք ֆիզիկական և վարքագծային որոշակի որակներ:

Իր հերթին, անհատի զարգացման մյուս սկզբնականը միջավայրն ու մշակույթն է: Այն ամենը, ինչ մենք սովորում ենք միջավայրից, առավել շատ՝ ընտանիքից, և այն, թե ինչպես է դա ազդում մեզ վրա, կախման մեջ է զանազան գործոններից, եղանակներից, դրանց ներազդեցության ժամանակահատվածից, ինչպես նաև այդ գործընթացի մասնակից մարդկանցից:

Ուրի Բրոնֆենբերգների (ամերիկյան հայտնի հոգեբան, իմա՝ Կ. Տ.) էկոլոգիական համակարգերի մոդելի մեջ զարգացող երեխան գտնվում է արտաքին միջավայրի հետ տարբեր մակարդակների փոխազդեցության մեջ: Միջավայրի մակարդակները, ըստ վերոհիշյալ հեղինակի, կազմված են.

1. միկրոհամակարգից, այն է՝ մարդ-իրադարձություն ընտանիքում և դպրոցում,
2. մեզոհամակարգից, այսինքն միկրոհամակարգերի մի քանի բաղկացուցիչների փոխկապակցվածությունից,

3. էկոհամակարգից՝ երեխայի մոտակա շրջապատից՝ դուրս հասարակական կազմավորումներից,
4. մակրոհամակարգից, այն է՝ մշակույթը ամբողջապես:

Միջավայրի ամեն մի բաղկացուցիչ ներազդում է երեխայի վրա, ինչպես և երեխան դրանց վրա:

Մեզոհամակարգի կենտրոն է հանդես գալիս ընտանիքը: Հենց ընտանիքով է առաջին հերթին պայմանավորված, թե ինչպիսին կմեծանա երեխան և ինչպիսի տեղ կզբաղեցնի հասարակությունում: Այն խիստ ներգործում ազդեցություն է ունենում երեխայի սպասումների, դիրքորոշումների, հայացքների և այլ մարդկանց հետ նրա փոխհարաբերությունների վրա:

Երեխայի բնականոն լիարժեք զարգացման գործում կարևորագույն դեր է կատարում դպրոցը: Այդ գործում հատկապես մեծ է գրականության դասընթացի ներազդեցությունը: Հենց այստեղ է, որ կյանքում առաջին անգամ հանդիպելով հերոսներին՝ երեխայի մոտ սկիզբ է առնում իդեալի հավաքական կերպարի ձևավորումը: Եվ պատահական չէ, որ Լևոն Շանթը իր «Գրական երկերու դերը» շարքում նշում է, որ «Գրքերում մեջեն խոսող ու գործող մարդիկը, ըլլան իրական ու պատմական դեմքեր, ըլլան բանաստեղծական մարմնացումներ, ինչպես և հեղինակը ինքը, ասոնք բոլորն ալ անխտիր ապրող ու կենդանի արարածներ են մեր հոգիներում մեջ, իսկական մարդիկ, որոնք դուրսի աշխարհին մեր հոգիները մտած մյուս մարդոց նման և անոնց հավասար, կան հոն, գոյություն ունին, կշարժին, կգործեն, կխոսին ու կազդեն:

Այդ պատճառով ալ ով սովոր է կարդալու, կապի մշտապես լայն, բազմերանգ ու խիստ հետաքրքիր ծանոթություն շրջանակի մը մեջ, կապի լայն աշխարհի մը մեջ, և կապի մանավանդ ընտիր աշխարհի մը մեջ, քանի որ մշտապես հաղորդակցության մեջ է հին ու նոր դարերու և բոլոր ժողովուրդներու ամենեկն խոր, մեծ, իմաստուն, տաղանդավոր ու առաքինի դեմքերուն հետ. ամենաընտիր մարդիկը, որոնք երբևիցե ապրած են արևի լույսին տակ՝ կամ մարդկային տենչանքներուն և երազանքի լույսին տակ»: Հետևապես, եթե Լևոն Շանթի խոսքերով ասելու լինենք, հենց դպրոցն է «այդ ընկերական ծանոթացումներու ժամադրավայրը»: Այստեղ է երեխան փորձարկում իր ինտելեկտուալ, ֆիզիկական, սոցիալական և զգացմունքային տվյալները: Դպրոցում նա ծեռք է բերում վստահություն իր ունակությունների հանդեպ: Դպրոցական միջավայրում է նրա մոտ սկիզբ առնում խոսքի զգացողությունը և ստեղծագործումը, որից էլ սկսվում է աշակերտների մտավոր զարգացումն ու զգացմունքային հասունությունը:

Այս և նման այլ առաջնային խնդիրների իրականացումը ուսուցիչների և ծնողների պարտքն ու պարտականությունն է:

Հետևաբար, որպեսզի և՛ դպրոցը, և՛ ընտանիքը համեն հաջողության իրենց առաքելությունը իրականացնելիս, անհրաժեշտ է նրանց միջև լիարժեք փոխհամաձայնեցվածություն:

Այս դրույթը էլ ավելի արդիական է ներկայումս: Այն կապված է մեզանում ընթացող հասարակական կյանքի վերափոխումների հետ: Ոչ ընտանիքը, ոչ էլ դպրոցը պատրաստ չէին շուկայական հարաբերությունների առաջադրած փոփոխություններին, ինչը և հանգեցրեց կրթական և ընտանեկան համակարգերի փոխհարաբերությունների վերաիմաստավորման անհրաժեշտության: Այդ իրադրությունը չէր կարող իր բնցասական ազդեցությանը չունենալ: Եվ այն անմիջապես ի հայտ եկավ դպրոցում, ուր հաճախումների և առաջադիմության կտրուկ անկում նկատվեց: Վիճակը էլ ավելի է բարդացնում որակյալ մանկավարժների պակասը: Օրինակ, ըստ կրթական մակարդակի, Հայաստանի ուսուցիչների միայն 78.6% -ը ունեն բարձրագույն, իսկ 15.6% միջնակարգ մասնագիտական ոչ մանկավարժական կրթություն:

Եթե այդ ամենին ավելացնենք նաև այն, որ ուսումնադաստիարակչական աշխատանքում իրեն խիստ զգացնել է տալիս գիտամանկավարժական հիմնավորվածության պակասը, ապա վիճակը դառնում է առավել մտահոգիչ: Այսպես, օրինակ, տարեցտարի ամբողջ աշխարհում ավելանում է տեղեկատվական տեխնոլոգիաների ազդեցությունը աշակերտների հաջողությունների վրա, ինչը և փոխել է ուսուցանել - սովոր

րել համակարգի բուն էությունը: Իսկ ինչպիսին է դրությունը Հայաստանի դպրոցներում, որոնց մեծ մասը գրկված է այդպիսի հմարավորություններից: Կարծում են նկարագրելու անհրաժեշտությունը ավելորդ է:

Երեխաների առաջադիմության վրա մեծ ազդեցություն է թողնում նաև ընտանիքի սոցիալ-տնտեսական և բարոյական վիճակը: Թույլ առողջությամբ, ոչ բավարար սնունդ ստացող, ընտանիքի պրոբլեմներով մտահոգված կամ իր ուժերի նկատմամբ թերահավատությամբ ներշնչված երեխաները հաջողության չեն հասնում դպրոցում: Իր հերթին այն երեխաները, որոնց ծնողների արժեքային կողմնորոշումները տարբերվում են դպրոցում ընդունված արժեքների համակարգից, հաճախ ունեն ավելի թույլ ծգտում ուսման նկատմամբ: Մեծ է նաև ծնողների դերը սովորողների զարգացման, ուսման առաջադիմության, նրանց մոտ որոշակի հմտությունների ձևավորման համար օժանդակող միջավայրի ստեղծման գործում:

Չառաջադիմող աշակերտները կարող են պատկանել ինչպես միջին, այնպես էլ բարձր բարեկեցության ընտանիքներին: Այն ծնողների երեխաները, որոնք մեծ չափով ուշադրություն են դարձնում մանկական զվարճանքներին, որպես կանոն սովորում են ավելի վատ, քան նրանք, ում ծնողները բարձր են գնահատում գիտելիքները և կրթությունը:

Այս ամենի հետ մեկտեղ, պետք է նշել, որ մեզանում, չնայած սոցիալ-տնտեսական շատ ու շատ համագամքների, բարձրացել է պահանջարկը բարձրագույն կրթության հանդեպ: Սակայն մեծ է դժգոհությունը ու անվստահությունը դպրոցում ստացած գիտելիքների որակի նկատմամբ: Այդ միտքն են արտահայտել հարցված 1999 թվականի դիմորդների 87.8 % -ը, և դա այն դեպքում, երբ նրանց 86.9 % -ը դպրոցն ավարտել են լավ և զերազանց գնահատականներով: Սրբությանի քննությունների համար անհրաժեշտ գիտելիքների խորացման նպատակով դիմորդները դպրոցից զատ մասնակցել են մասնավոր վճարովի պարապմունքների: Ըստ ՀՀ վիճակագրության պետական ռեգիստրի և վերլուծության մախարարության, պետական բուհեր դիմած հարցված դիմորդների 74.7 % -ը մասնավոր վճարովի պարապմունքների է դիմել:

Հայտնի է, որ ուսման նկատմամբ աշակերտների վերաբերմունքը մեծապես պայմանավորված է նրանց դաստիարակության դրվածքով: Այդ տեսակետից մեր օրերում ուշադրություն պահանջող հիմնահարցերից է սեռական և սոցիալական հասունության ծայրահեղ խզվածությունը:

Դեռահասների ֆիզիկական զարգացման հետ մեկտեղ փոխվում են նրանց փոխհարաբերությունները ծնողների, ուսուցիչների և շրջապատի մարդկանց հետ: Այդ փոփոխությունների դրդապատճառ կարող է հանդիսանալ նրանց ինքնահաստատման ձգտումը: Անհատի հասունացման նշված դրսևորումը հաճախ ընտանիքում և դպրոցում լարվածության առաջացման գործոն է դառնում: Դեռահասները փորձում են դուրս գալ այն սահմաններից, որոնք նախօրոք ստեղծված էին իրենց համար ծնողների և ուսուցիչների կողմից, այն ժամանակ, երբ վերջիններս դժվարությամբ և անհանգստությամբ են թույլ տալիս նրանց լի-նել անկախ:

Հատուկ մտահոգության առարկա է հանդիսանում նաև վաղ ամուսնությունների, չամուսնացած դեռահաս մայրերի թվի աճը համրապետությունում: Այդ տեսակետից հարց է ծագում ինչպես է վաղ մայրությունը ազդում դեռահաս աղջկա հետագա զարգացման վրա, կամ ինչպես կանրադառնա դեռահաս և թերուս մոր հանգամանքը նրա ապագա երեխաների դաստիարակության և ուսման վրա:

Ահա թե հատկապես ինչու դեռահաս մայրերը պետք է շարունակեն իրենց անձնային ու սոցիալական զարգացումը և, դրա հետ մեկտեղ հարմարվեն երեխայի պահանջներին:

Իր հերթին, «անմեղ» երևույթ էլ նաև վաղ հայրությունը: Այն ևս կարող է բացասական ազդեցություն ունենալ հասարակության զարգացման գործում: Դեռահաս հայրը, գտնվելով իր նորաստեղծ ընտանիքի նյութական պահանջի ճնշման ներքո, հաճախ հեռանում է դպրոցից՝ մնալով թերուս: Ժամանակի ընթացքում ամուսինների մոտ ավելի հաճախ են առաջանում ընտանեկան վեճեր, որոնք ոչ հազվադեպ հանգեցնում են ապահապրվածի:

Նշված հարցերի համատեքստում առանձնահատուկ կարևորություն է ստանում Հայաստան ներթափանցած տեղեկատվական ճնշման, սեռական հեղափոխության և մասսայական կուլտուրայի ներազդեցության, եթե ոչ չեզոքացման, ապա գոնե մեղմացման խնդիրը: Այս տեսակետից կենսական անհրաժեշտություն է, որպեսզի հեռուստատեսությունը դեռահասների ծնողների և ուսուցիչների հետ: Երբ մեծերը և երեխաները ձևավորելիս սերտ կապի մեջ լինի երեխաների ծնողների և ուսուցիչների հետ: Երբ մեծերը և երեխաները ձևավորվում են ինչպես մեկ միավոր, զբաղվում են համատեղ գործունեությամբ և ստանում բավարարվածություն միասին անցկացրած ժամանակից, ծնողների և ուսուցիչների դերը երեխաների կողմից սոցիալական արժեքների ընկալման գործում առավել ազդեցիկ է դառնում:

Եթե ծնողները չեն հետևում այն հեռուստահաղորդումներին, որոնք նայում են իրենց երեխաները, և չեն քննարկում կամ բացատրում դիտածը, ապա հաստատվում է հեռուստատեսության «մենիշխանություն» երեխաների արժեքային կողմնորոշումների ձևավորման ասպարեզում: Քանի որ բոլոր տարիքի երեխաները ավելի և ավելի շատ ժամանակ են անցկացնում հեռուստացույցի առջև, վերջինիս դերը, ինքնըստինքյան, գնալով մեծանում է:

Հետևաբար Հայաստանում պետք է ծավալվի երեխաների ոչ միայն սոցիալական, այլև հոգևոր, բարոյական պաշտպանության շարժում:

Կարծում ենք՝ վերը նշված հարցադրումների հրապարակային քննարկումը կնպաստի ինչպես դպրոցի և ընտանիքի, այնպես էլ հասարակության և պետության գործողությունների համատեղմանը աշակերտության ուսման և դաստիարակության լիարժեք կազմակերպման ասպարեզում: